Գնառաջարկների ներկայացման հրավեր

1. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիզկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գնառաջարկներ 15-րդ կետում նկարագրված չափանիշներով **պլանշետների** ձեռքբերման վերաբերյալ:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև **16.07.2026թ. ժամը 17:00՝**
   - Էլեկտրոնային տարբերակով՝ procurement@inecobank.am էլ. հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը՝ **PROC06072026/պլանշետներ:**
     Գնառաջարկի փաթեթն անհրաժեշտ է ուղարկել «rar» տարբերակով, կոդավորված, իսկ կոդն ուղարկել ԳՆՀ ավարտից հետո, procurement@inecobank.am էլ. հասցեով, 17.07.2026թ.-ին, մինչև ժամը 11:00,
     ԿԱՄ
   - Փաստաթղթային տարբերակով, փակ, կնքված ծրարով՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով՝
   - ԳՆՀ կոդը՝ **PROC06072026/պլանշետներ,**
     - մասնակցի անվանումը,
     - ներկայացման ամսաթիվը,
     - ստացող՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:

3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել՝
   Կոնտակտային անձ՝ Գնումների բաժին, Հովհաննես Միերյան, +374 33 08 80 15:
4. Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ: Այն հանդիսանում է շուկայում առկա գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով:
5. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
6. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
7. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝

   - Գնառաջարկ, որը ներառում է տեղեկատվություն մատակարարման ժամկետի և վճարման պայմանի վերաբերյալ,
   - Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոններին համաձայնությունը:

8. Գնառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել ստորև լրացված ցանկով:
9. Գնառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
10. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:
11. Գնառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
12. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գնառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:

13. Վճարումները կատարվում են Ինեկոբանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:
14. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

15. ԳՆԱՌԱՋԱՐԿ

	Գնման առարկայի անվանումը և նկարագիրը	Քանակը (հատ)	Միավորի արժեքը ՀՀ դրամ ներառյալ հարկեր	Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ ներառյալ հարկեր
1	**Պլանշետ** Samsung Galaxy Tab S10 FE Wi-Fi 128GB (Silver) կամ համարժեք տեխնիկական բնութագրերով այլ մոդել ***Տեխնիկական բնութագիր*** • Սարքերը պետք է լինեն պրոֆեսիոնալ մոդելային շարքից (Professional / Flagship) • Օպերացիոն համակարգը՝ Android, տարբերակը՝ 15 կամ ավելի բարձր • Օպերատիվ հիշողություն՝ 8GB կամ բարձր • Հիմնական հիշողություն՝ 128GB կամ բարձր • Դիսպլեյի տեսակ IPS/LCD կամ ավելի բարձր որակի • Էկրանի չափը 10 – 11 (inch դույմ) միջակայքում • WiFi այո • NFC այո • 4G LTE ցանց՝ կարող է չապահովել • Մարտկոցի հզորությունը՝ ոչ պակաս քան 8000mAh • Դիմային և հիմնական տեսախցիկներ • Հայտարարության տարին՝ 2025 – 2026թթ. • Սնուցման բլոկ ներառյալ իր պարամետրերին համապատասխան • Երաշխիք՝ ոչ պակաս քան 1 տարի:	10		
2	Առաջարկվող պլանշետի արտաքին պատյան, մոնոտոն, մուգ գույնի			

Մատակարարման ժամկետը _____ օրացուցային օր ժամանակահատվածում:

Պահանջվող կախնավճար_____դրամ:

_____*Մասնակցի/կազմակերպության անվանումը*

_____*Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝*

" " _____*2026թ.*
Կ.տ